



կանը՝ իբրեւ անկիւնադարձ հայ դրական ու մշակութային շարժման: 1944-ին ամերիկահայ հասարակութեան ուղադրութիւնը կը հրաւիրէր «Պայքար»-ի բացառիկ թիւին մէջ Պր. Մ. Յ. Թիւրեքեանի գեղեցիկ վերլուծականով մը, իսկ Պր. Յ. Քիւրտեան ներկայ տարւոյս «Պայքար»-ի Յունուար 15-ի թիւին մէջ կը փութար աւետելու Յոբելեանի աղբը, եւ ժողովրդականացնելու համար «Բազմավեպ»-ը՝ կը ներկայացնէր անոր հարիւրամեայ շրջանին հայկական վերելքին համար ունեցած մեծ ազդեցութիւնը: Նիւ Եօրքի Զայնապիրուի բաժնին՝ «Հայկական Ռատիոժամ» մէկէ աւելի անգամներ ոգեւորեալ յայտարարութիւններ կը կատարէր կազմակերպութեամբ Օր. Տիանա Սարգիսի եւ Պր. Յ. Գուլումճեանի, որոնց բոլորին ալ մեր ջերմ շնորհակալութիւնը:

Երբ 1947-ի մարտին Խմբագրութիւնս Յոբելեանի հրաւէր-աղբը կ'ուղղէր բովանդակ Հայ Մամուլին, փութով տարածուելով լուրը դադուժէ դադուժ՝ կը ստեղծուէր տաք խանդավառութիւն մը, վասնզի այդ յորեկանին մէջ Հայ Մամուլը զիտակցօրէն կը տեսնէր տօնը Հայ Գրին եւ Հայ Ժողովուրդի կենսունակութեան: Հասան մեղի ամէն կողմէ նամակներ, հեռագրեր, ու Հայ Մամուլի ներկայացուցիչներու Վենետիկ ժամանելու համար ինքնաբերաբար արտայայտուած փափաքներ, որոնց ամէնուն ալ անցադիրներու պատրաստութեան դիւրութիւններ տալու համար հանդէսներու թուականը, որ նախապէս սահմանուած էր Սեպտեմբերի սկիզբը, ստիպուեցանք յետաձգել Հոկտեմբեր 18 եւ 19 թուականներուն: Քաղաքական ներկայ կացութիւնը, ազդերու միջեւ տակաւին դոյութիւն ունեցող կնճռոտումները թոյլ չտուին այդ փափաքներու լրիւ իրականացման: Այնուհանդերձ Հայ Սփիւռքը Ամերիկայի, Ֆրանսայի, Եգիպտոսի, Սիւրիոյ, Կ. Պոլսի՝ կարծես մրցելով իրարու հետ բերին իրենց մասնակցութիւնը՝ նուիրելով խանդավառ էջեր մամուլի մէջ՝ տալով նմոյշ ասկէ դար մը առաջ անոր դորձածած ժողովրդական վճիռ լեզուին, բացատրելով անոր ծրագիրը ու իրենց տարողութեան չափով ցոյց տալով միանգամայն անոր կատարած նուաճումները հայ լեզուի, հայ պատմութեան ու դրականութեան, միջազգային արժէքներու մեր մէջ փոխանցումին եւ զիտական ու կրթական մարզերու մէջ ունեցած օգտակարութիւնները:

«Յառաջ», «Յուսարեւ», «Հայրենիք», «Պայքար», «Արեւմուտք», «Ժամանակ», «Մարմարա» (որ առանձին թիւ մը նուիրած էր «Բազմավեպ»ին), «Շարժում», «Նոր Կեանք», «Մասիս» (Պէյրութի), «Ազատ Օր», «Ռազմիկ» (1943-ի), իրանեան շաբաթաթերթ «Նեղայէ Հազիդաթ» (Զայն Ճամարտութեան) եւ նորարողը՝ «Զարթօնք»ը (Եթովպիայի հայ դադուժին) եւ դեռ ուրիշներ՝ իրենց կարելին ջանացին ընել մասնակցելու համար Հայ Մամուլի երիցագոյն ներկայացուցիչի Փառատօնին: «Արեւելք» օրաթերթը եւ «Նայիրի» ամսագիրը նիւթապէս ալ ներկայ էին տօնախմբութեան յանձին բանաստեղծ Պր. Ա. Ծառուկեանի, նոյնպէս «Հանդէս Ամսօրեայ» յանձին Հ. Համադասալ Վ. Ոսկեանի, «Յառաջ» յանձին Օր. Արփիկ Միսաքեանի, «Երոտաղէմ» յանձին Պր. Լ. Կիրակոսեանի, Ֆրանսայի Հայ Գրողներու Միութիւնը յանձին

քերթողուհի Տիկ. Մարի Աթմաճեանի եւ ուրիշ Գիտական ու Կրթական Մարմիններ իրենց ներկայացուցիչներով:

Մեր ներկայ թիւին մէջ պիտի տանք արձագանգը Հայ Մամուլի գնահատական արտայայտութեան՝ իբրեւ ապացոյց ազգային խանդավառութեան:

Այս յայտնի ոգեւորութեան ցոյցերուն մէջ կայ անտարակոյս խոր երախտագիտութեան եւ ջերմ հայրենասիրութեան ձայնը: Ու այդ է ահա միտիթարական կէտը մեր աստանդական ու վշտաշարժար հայ ազգային կեանքին մէջ:

Երախտագիտութիւն առ Մեծն Միտիթար եւ իր ձեռակերտը Ս. Ղազարու երկուհարիւրյիսունամեայ Միտիթարեան Միաբանութիւնը՝ որ երկաթէ դարերէ վերջ ազգային վերանորոգութեան եւ վերելքին ամէնէն գործունեայ եւ կազմակերպեալ Մարմինը եղաւ: Երկու հանճարեղ դէմքեր են անշուշտ Մեսրոպ եւ Միտիթար, առաջինը հայկական գրի եւ կեանքին հիմնադիր, երկրորդը՝ նոյնին վերածնող յետ աղէտի եւ տղիտութեան երկարատեւ շրջանի մը:

Նոր հորիզոն մը կը բացուէր հայութեան համար այն օրը՝ երբ Օչականի մեծ Սուրբը յաղթական՝ զիրերու տախտակները ձեռքը՝ կը կոխէր Հայաստանի հողին վրայ, ու ազգը իր բովանդակ դանդուածով կը զգար ինքզինքը այլեւս տէրը իր երկրին եւ ազգային սիրալի աւանդութիւններուն: Այդ օրէն ի վեր Հայ Ժողովուրդը յաղթած էր դարերու սպառիչ ուժին: Անցան դարեր ու դարեր, եկան պանդխտութեան ու թանձր խաւարի ժամանակները եւ մոռցնել տուին Մեսրոպեան հորիզոնին փայլն ու գեղեցկութիւնը: Բայց հզօր ճառագայթ մը լոյսի, կրկին հանճարի մը գլխէն ցոլարձակ, ԺԼ դարու սկիզբը կը պատուէր աղջամուղջը, վառելով գիտութեան ջահը, որուն լոյսով նոր սերունդը ուղի առած՝ կը նայէր հիմա հին դարերու ցանցապատէն դէպի հին օրերու թշուառ համայնքը՝ խարխափող ստրկութեան եւ տղիտութեան ճիրաններուն տակ ...:

Երբ Հայ Մամուլը այս աշնան առիթ առնելով «Բազմավեպ»-ի դարադարձը՝ Միտիթարի կանթեղը կը փառաբանէր, որուն լոյսին մէկ ցոլացումն է «Բազմավեպ»-ի հրապարակադրական գործունէութիւնը, կ'ակնարկէր որդիական երախտագիտութեամբ այդ մեծ յեղաշրջումին որ հայկական կեանքին մէջ բերին Միտիթար ու Միտիթարեանք:

Խմբագրութիւնս խորին յուզումով կ'արձանագրէ հոս այդ դէպքին յիշատակը, կրկնապատկելով իր եռանդը եւ սէրը օգտակար ըլլալու հայ ազգին առաւելագոյն չափերով:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս մեր նախնիքս թիւի խմբագրականին մէջ յայտարարած էինք՝ կը սկսինք հոս հրատարակել զանազան կողմերէ «Գեղունի»-ին համար զրկուած յօդուածներ, որոնք մեր ձեռքը ուշ հասած ըլլալով եւ «Գեղունի»-ի էջերը արդէն լրացած՝ չէինք կրնար հոն ի լոյս ընծայել:

ԽՄԲ.